

**Ս. ՂԵՌՆՂԵՆՑ ԶԱՅԱՆԱՅԻՑ ՏՕՆԸ
ՀԻՄՆՈՒՄՅԻՆ ԱՄԵՐԵԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻՆ ՄԷՋ**

Երեքշաբթի, 21 Փետրուար 2006-ին, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի հոգեւորականաց ողջ դասը արժանաւորապէս եւ մեծ շուքով յիշատակեց հաւատքի ու հայրենիքի, խղճի ու պատիւի պաշտպան կրօնաւորներուն՝ «սրբոց հարցն հոգեւորաց եւ քաջարի նահատակաց՝ ընդդէմ կռապաշտից, քաջայաղթ ախոյեանից, ուխտապահ ժողովրդեան քաջալերող առաջնորդաց»՝ Ղեւոնդեանց Զահանայից տօնը:

Սրբոց Ղեւոնդեանց տօնը նաեւ տօնն է բոլոր քահանաներուն, հետեւաբար, Էսսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ յարկին տակ, առաւօտեան ժամը 10-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00, տեղի ունեցաւ Զահանայից Միօրեայ Համագումար, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, մասնակցութեամբ՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երեց միաբան՝ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեանի եւ հոգեւորականաց դասուն: Նշենք, որ հոգեւորականաց այս համագումարը մեր Թեմի աւանդութեանց մաս կը կազմէ եւ տարեկան հերթականութեամբ տեղի կ'ունենայ Ս. Ղեւոնդեանց տօնին օրը:

ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Առաւօտեան ժամը 10-ին, Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Գիշերային եւ Առաւօտեան միացեալ ժամերգութիւն. խնդրուեցաւ նահատակ սուրբերուն բարեխօսութիւնը եւ աղօթքը՝ մեր կեանքերը ուղղափառ խոստովանութեամբ եւ արժանաւորապէս ապրելու համար:

Ժամերգութեանց աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը նախ ողջունեց Եփրեմ Սրբազանն ու Թեմիս հոգեւորականաց դասը, ապա կատարեց հոգեւոր խորհրդածութիւն, Ղեւոնդեանց Զահանայից եւ այսօրուան քահանաներու կեանքերը զուգորդելով եւ զանոնք դիտելով ու խորհրդածելով եփեսացիներուն ուղղուած Պօղոս Առաքեալի նամակին 6-րդ գլուխի 11-20 համարներուն ընդմէջէն, ուր Առաքեալը կոչ կ'ընէ բոլորիս՝ Աստուծոյ խօսքով ու հոգիով սպառազինուելու եւ միշտ աղօթելու: Առաջնորդ Սրբազանը հանգամանօրէն բացատրեց, որ քահանայութիւնը տառապանք կ'ենթադրէ: Ան որ կ'ուզէ Զրիստոսի ներկայութիւնը ապրիլ, չի կրնար առանց տառապանքի ու առանց պայքարի ապրիլ, որովհետեւ մեր պայքարը աներեւելի ուժերու դէմ է, չարին ու իր արբանեակներուն դէմ է, անոնց միացող ու կործանող նետերու տարափին տակ չենք կրնար դիմանալ, եթէ սպառազինուած չըլլանք Ս. Հոգիի զէնքերով ու զրահով: Սրբազանը նաեւ խօսեցաւ ու հատուածներ մէջբերեց վերջերս հրատարակուած՝ երջանկայիշատակ Յովհաննէս-Պօղոս Բ. պապին կեանքին ու գործին նուիրուած “John Paul The Great” գիրքէն, որուն հեղինակն է Peggy Noonan: Հարցումի մը՝ թէ ինչպէ՞ս կարելի է զԱստուած գտնել, ան կը պատասխանէ. զԱստուած գտնելու առաջին պայմանը ինքզինքդ ներդրեան ու տառապանքի մատնել է, որովհետեւ տառապանքիդ մէջ է որ կրնաս գիտնալ ու տեսնել քու թերութիւններդ, տկար կողմերդ, թուլութիւններդ ու առաւելութիւններդ: Երկրորդ՝ ծունկի գալ, այսինքն՝ աղօթքի խոնարհիլ. ինչ է որ դուն կրնաս զղջալ ըրածներուդ

Եւ դառնալ Աստուծոյ, կրնաս ներել ու ներում գտնել, կրնաս զօրանալ եւ ուրիշները քաջալերել, խոնարհիլ ու ապա բարձրանալ...: Առաջնորդ Սրբազանը նշեց, որ քաջ նահատակ Ղեւոնդեանք ու Վարդանանք մուօ գիշեր մը անցուցին նախքան իրենց փառաւորուիլը, Քրիստոսի մարմնով ու արիւնով հաղորդուեցան, նախքան փառաց պսակին արժանանալը: Նոյն ձեւով ալ, ըսաւ Սրբազանը, մեր կեանքին մէջ կ'ունենանք մուօ գիշեր մը կամ գիշերներ, զանոնք դիմագրաւելու համար պետք ունինք սպառազինուելու Աստուծոյ խօսքով եւ զօրանալու աղօթքով: Ղեւոնդեանք այս սպառազինումով եւ աղօթքով փառաւորուեցան, մենք եւս նոյն ճամբէն պետք է քալենք, նոյն ոգիով ապրինք՝ արժանաւորապէս գիրենք մեր կեանքերուն մէջ արտացոլացնելով, եզրափակեց Առաջնորդ Սրբազանը:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՀԵՏ

Խորհրդածութենէն ետք, ժամը 11:30-ին, Ֆերահեան Ազգային Վարժարանի բարձրագոյն դասարանի աշակերտները հաւաքուեցան եկեղեցի: Տիար Կարօ Պետրոսեան աշակերտներուն հակիրճ բայց կուռ բացատրութիւն տուաւ Ղեւոնդեանց Քահանայից տօնին մասին, որմէ ետք Առաջնորդ Սրբազան Հայրը ուսանողներուն ներկայացուց քահանայից համագումարին նպատակը, շեշտելով, որ «այսօր բոլոր կրօնաւորներս կը հաւաքուինք միասին մեր թերութիւնները քննարկելու, զանոնք սրբագրելու, նոր յանձնառութեամբ գալիք ծրագիրները մշակելու, ծառայական մեր ուխտը վերանորոգելու՝ անսակարկ ոգիով ծառայելու մեր եկեղեցւոյ, ազգի զաւակներուն ու հայրենիքին»: Իր խօսքի աւարտին Սրբազանը կոչ ուղղեց աշակերտներուն, որպէսզի իրենք եւս ինքնաքննութեան ենթարկեն իրենց անձերն ու աշխատանքները, եւ նոր յանձնառութեամբ ու պարտականութեան բարձր ոգիով պատրաստեն իրենց դասերը եւ կատարեն ըսուածները:

Առաջնորդ Սրբազան Հօր խօսքէն ետք, քահանայից դասը Վարդանանց քաջամարտիկներու նուիրուած հայրենաշունչ երգերու եւ շարականներու փունջ մը հրամցուցին աշակերտներուն, որմէ ետք աշակերտները միասնաբար երգեցին Տերունական Աղօթքը եւ ազգային Քայլերգը:

Ապա Առաջնորդ Սրբազան Հայրը եւ բոլոր հոգեւորականները ուղղուեցան ամժամեայ Առաջնորդարանիս դահլիճը, ուր տեղի ունեցաւ միօրեայ համագումարը:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ Ա. ՆԻՍՏԸ

Համագումարի առաջին նիստը բացուեցաւ «Հայր Մեր»ով եւ ուխտի նորոգման աղօթքով: Առաջնորդ Սրբազան Հայրը ողջունեց թեմիս հոգեւորականները, շնորհաւորեց անոնց տօնը եւ հրաւիրեց բոլորը՝ միօրեայ այս համագումարի նշանաբան ընտրել «ուխտի վերանորոգումը եւ ծառայական կեանքի առաւել պայծառակերպումը»: Սրբազանը ողջունեց նաեւ Ս. Աթոռիս երեց միաբաններէն եւ թեմիս նախկին առաջնորդներէն՝ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեանը, բարի կեցութիւն մաղթեց Սրբազան հօր, որ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինումով ժամանակ մը պիտի մնայ մեր թեմը:

Առաջնորդ Սրբազանը, յուրախութիւն ամենեցուն, յայտնեց, որ Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով իր եւ Ազգային Վարչութեան խնդրանքին, Աւագութեան տիտղոս շնորհած է Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Վիգէն քհնյ. Վասիլեանի, իսկ ծաղկեայ սեւ փիլոն կրելու արտօնութիւն՝ Ս. Խաչ Մայր Տաճարի հովիւներէն Արժ. Տ. Նարեկ քհնյ. Փեհլիվանեանի ու Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Աւետիս քհնյ. Թորոսեանի: Սրբազանը յայտնեց, որ Վեհափառ Հայրապետին շնորհաբաշխութեան կոնդակները պաշտօնապէս պիտի փոխանցէ՝ վերոյիշեալ քահանաներուն պաշտօնավարած եկեղեցիները այցելելով:

Տեղի ունեցաւ դիւանի ընտրութիւն. ընտրուեցան Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան՝ ատենապետ, եւ Հոգշ. Տ. Պարթեւ Կիւլիւմեան՝ ատենադպիր: Հայր Միւռն նախ դիւանին անունով շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, շնորհաւորեց Առաջնորդ Սրբազան Հօր անուանակոչութիւնը, ինչպէս նաեւ երեք քահանայ հայրերուն պարգեւատրումը, որմէ ետք հրաւիրեց Եփրեմ Սրբազանը, որ իր սրտի խօսքը ուղղէ: Եփրեմ Սրբազան բարձր գնահատեց Առաջնորդ Սրբազան Հօր տարած աշխատանքներն ու թեմական ծառայութիւնը, շնորհաւորեց անոր քահանայական ձեռնադրման 30րդ տարեդարձը, ինչպէս նաեւ շնորհաւորեց քահանայ հայրերը, կոչ ուղղելով՝ բոլորուելու Առաջնորդ Սրբազան Հօր շուրջը եւ քաջալերելով ամուր մնալ իրենց ստանձնած առաքելութեան մէջ, նշելով՝ որ գործող քահանաներու միատեղ այս համախմբումը ցոյց կու տայ, որ գաղութն ու Թեմը բարգաւաճման մէջ են: Ապա իր խօսքը աւարտելով, ան խրախուսեց քահանաները ըսելով. «Մի՛ ըլլաք երկաթ, որ ցեխին մէջ իյնալով կը ժանգոտի, այլ եղէք ոսկի ու ադամանդ, որպէսզի եթէ ցեխին մէջ ալ իյնաք՝ մնաք անժանգ»:

Համագումարի առաջին դասախօսութիւնը ներկայացուց Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, նիւթ ունենալով՝ «Հոգեւոր հովիւը դիտուած հայ ծեսին ընդմէջէն»: Հայր Սուրբը արագ պատմականը ընելով ծեսին, նշեց, որ Ահարոնի անձով սկսող եւ Ղեւի ցեղին վստահուած պարտականութիւնը աստուածային պատուիրան էր, եւ քրիստոնեական եկեղեցին ի՞նչ ալ, ծեսին կարեւորութիւնը եւ հաւատացեալի հոգիի աճման մէջ անոր անհրաժեշտութիւնը նկատի առնելով, առաջին դարէն իսկ որդեգրած ու յատուկ խնամքով եւ երկիւղածութեամբ մշակած է իր ուրոյն ծեսը, որովհետեւ ծեսը «պատուհան մըն է բացուած դէպի Աստուած», ինչպէս նաեւ արին ներարկող սիրտը եկեղեցական արարողութեանց եւ ներշնչողը հաւատացեալներու հոգեւոր կեանքին: Հայր Սուրբը խօսեցաւ նաեւ ծեսին ինչութեան, իմաստին ու կատարման պայմաններուն մասին, անհրաժեշտ նկատելով որ անիկա հոգեւորականի հասկացողութեամբ եւ հաւատքով կատարենք եւ ապա հաւատացեալներուն մատուցենք, հեռու ձեւարիկ մոլուցքէ, ինքնացուցադրութենէ եւ թութակային կրկնումէ, Ս. Ներսէս Շնորհալիի բացատրութեամբ՝ չըլլալ պարզ խողովակ մը, որուն մէջէն ջուրը կը հոսի ու կ'անցնի, այլ ըլլալ սպունգ մը՝ լիցքաւորուիլ, ծծել եւ ապա տալ, ուրիշներու ծարաւը յագեցնելու համար:

Ժամը 1:30-ին տեղի ունեցաւ հաւաքական ճաշ, որու ընթացքին փոխադարձ սիրոյ խօսքերով հոգեւոր հայրերը զիրար շնորհաւորեցին:

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ճաշի դադարեն ետք, ժամը 2:45-ին տեղի ունեցավ Կրօնական Ժողով, որ տեւեց մինչեւ ժամը 4:45: Ժողովին քննարկուեցան մեր Թեմը յուզող զանազան հարցեր՝ ծխական, կրօնական, կազմակերպչական, դաստիարակչական, ծխական համայնքներու վերաշխուժացման կարելիութեանց, կիրակնօրեայ, երիտասարդական եւ դպրոցական աշակերտական ձեռնարկներու, ինչպէս նաեւ Հայ Դպրոցի տարուան ձեռնարկներու ծրագրման ու գործադրման միջոցներն եւ կարելիութիւնները:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ Բ. ՆԻՍՏ

Դեւոնդեանց քահանայից համագումարի երկրորդ նիստը սկսաւ երեկոյեան ժամը 5-ին: Առաջնորդ Սրբազան Հօր յատուկ հրաւերով, այս նիստին իր մասնակցութիւնը բերաւ Վիեննայի Կաթոլիկ Համալսարանի Ծիսագիտական ուսմանց դասախօս՝ Փրոֆ. Հանս Ֆեօլները: Սրբազանը բարի գալուստ մաղթեց դասախօսին եւ զինք ներկայացուց որպէս մօտիկ բարեկամը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, ինչպէս նաեւ անձնապէս իրեն: Ապա Սրբազանը հրաւիրեց, որ Փրոֆեսէտօրը ներկայացնէ իր դասաւանդած համալսարանը: Փրոֆ. Նեօլները նախ հոգեւոր դասուն ներկայացուց Վիեննայի Կաթոլիկ Համալսարանը, յայտնեց որ ինք անձնապէս մեծ համարում ունի Հայոց Ծեսին նկատմամբ՝ ընդհանրապէս, ու Հայկական Պատարագին նկատմամբ՝ մասնաւորաբար, նշելով որ իր պսակաւորի թեզին նիւթ ընտրած է «Հայոց Պատարագամատոյցը ըստ Ս. Աթանասի»: Ապա, ներկայ հոգեւոր հայրերուն առիթ տրուեցաւ հարցումներ ուղղելու:

Համագումարի երկրորդ դասախօսութիւնը ներկայացուց Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, նիւթ ունենալով՝ «Հովիւը իր հոգեւոր ծառայութեան մէջ»: Հայր Սուրբը խորիմաստ կերպով խօսեցաւ հովիւին ու յատկապէս հայ հոգեւորականի տիպարին մասին, շեշտելով այն՝ թէ հոգեւոր հովիւը ինքնաքննութեամբ եւ ինքնատեսութեամբ պետք է կատարէ իր պաշտօնը եւ քրիստոսի աչքերով պետք է դիտէ իր շրջապատը, փորձէ իր գործերուն ընդմէջէն զԱստուած յայտնել մարդոց՝ քրիստոսի գործակից դառնալով: Հայր Սուրբը, հովիւին անձին մասին խօսելէ ետք, խօսեցաւ քահանայութեան պատրաստութեան, ինքնազարգացման, ընթերցանութեան անհրաժեշտութեան, հովուական ծառայութեան եւ վարչական-կազմակերպչական պարտաւորութեանց մասին, կոչ ուղղելով բոլորին՝ իրենց ծառայական կեանքով ու պարտականութեանց կատարումով նմանելու Դեւոնդեանց քահանայից:

Համագումարի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը բարձր գնահատեց երկու դասախօս Հայր Սուրբերը՝ իրենց ներկայացուցած նիւթերուն համար, ինչպէս նաեւ բոլոր եկեղեցականները՝ իրենց լուրջ եւ ամբողջանուէր մասնակցութեան համար: Ապա իւրաքանչիւր հոգեւորականի նուիրեց Անթիլիասի տպարանէն լոյս տեսած «Աւագ Շաբաթ» գիրքը, մաղթելով որ յառաջիկայ տօնական օրերն ու ամբողջ Մեծ Պահքը դառնան բոլորիս համար նոր յանձնառութեանց, ինչպէս նաեւ վերանորոգման ու առաւել աշխոյժ գործունեութեանց ժամանակաշրջան:

Համագումարը փակուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով, երեկոյեան ժամը 6:00-ին:

Ս. ՊԱՏԱՐԱԳ

Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից տօնական հոգեպարար օրը պսակուեցաւ ու կնքուեցաւ Ս. Եւ անմահ Պատարագով, զոր մատոյց եւ յաւուր պատշաճի քարոզեց Թեմիս Առաջնորդ Սրբազան Հայրը: Ս. Սեղանին սպասարկեցին Հայր Միւռնոն եւ Հայր Պարթեւ, իսկ մոմակրութեան, քշոցակրութեան, բուրվառակրութեան եւ խորանէն ու դասէն երգեցողութեան պաշտօնները կատարեցին Թեմիս քահանայ հայրերը: Ս. Պատարագին ներկայ էին Թեմիս Ազգային Վարչութեան անդամները, եկեղեցւոյ հոգաբարձական կազմը եւ հաւատացեալներու բազմութիւն մը:

Քարոզէն առաջ, Առաջնորդ Սրբազանը թափօր դարձաւ եկեղեցւոյ մէջ, մինչ հոգեւորականները կ'երգէին սրբոց Ղեւոնդեանց նուիրուած շարականը: Առաջնորդ Սրբազանը երգեց բարեխօսութեան աղօթքը, յականէ յանուանէ յիշելով Վարդանանց հերոսմարտի օրերու Վաթողիկոս Յովսէփ Հողմեցին, Սահակ Ռշտունեաց եպիսկոպոսը, Բասենի Թաթիկ եպիսկոպոսը, Վանանդեցի Ղեւոնդ Երեցը, Աղբակի Մուշեղ, Բագրեւանդի Արշէն եւ Արծրունեաց Սամուէլ քահանաները, Քաջաջ Ռշտունի եւ Աբրահամ Արտաշատցի սարկաւազներն ու եկեղեցւոյ բոլոր ընտրեալ պաշտօնեաները:

Իր քարոզին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը խօսեցաւ Ղեւոնդեանց Քահանայից վեհ ոգիին ու հաւատքի ախոյեաններուն կեանքին մասին, ապա անդրադարձաւ քահանայից միօրեայ համագումարին, շեշտելով, որ «այսօր բոլոր քահանաներուս համար ուխտի օր եղաւ, ուխտ մը՝ անսակարկ ծառայելու Աստուծոյ, Ազգին ու Հայրենիքին, ուխտ մը, որ կնքուեցաւ «հեղմամբ արեան եւ արժանահայց մաղթանօք» Ս. Ղեւոնդեանց քահանայից՝ ի պայծառութիւն ազգիս Հայոց եւ ի շինութիւն Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ եւ ի պանծացումն ու փառաւորումն Ամենասուրբ Երրորդութեան»:

Պատարագի աւարտին հոգեւորականաց դասն ու հաւատացեալները միասնաբար երգեցին քաջամարտիկ Վարդանանց Չօրավարաց նուիրուած շարականներ ու ազգայնաշունչ երգեր, ինչպիսիք են «Նորահրաշ պսակաւոր», «Իմ հայրենեաց հոգի Վարդան», «Թե հայրենեաց պսակադիր», «Հիմի՞ էլ լռենք» եւ այլք: Իսկ աւարտին երգուեցան «Ի վեհ բարձանց», «Կիլիկիա» եւ «Մեր հայրենիք» մաղթերգները:

Ս. Պատարագի աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն՝ Ս. Նահատակաց եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կողմէ, որմէ ետք բոլորը մեկնեցան իրենց տուները գոհունակ սրտով եւ Ղեւոնդեանց Քահանայից ոգիով ու շունչով ներշնչուած ու զօրացած:

ՊԱՐԹԵՎ ՎՐԴ. ԿԻԼԻԻՄԵԱՆ

THE CELEBRATION OF THE FEAST OF ST. GHEVONT
IN THE WESTERN PRELACY

On Tuesday, February 21, 2006, the Western Prelacy celebrated the Feast of St. Ghevont. Since this feast is also the feast of the Armenian Priests, a one-day clergy seminar took place under the auspices of His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, at Holy Martyrs Church in Encino from 10:00 a.m. to 6:00 p.m. Joining the Prelate were His Eminence Archbishop Yeprem Tabakian and the entire order of clergy of the Western Prelacy.

The day began with a service at Holy Martyrs Church, during which the Prelate welcomed Arch. Tabakian and all clergy members, and then offered the spiritual message of the day. At 11:30 a.m. the students of the upper grades of Ferrahian High School gathered in the church, where Mr. Garo Bedrosian gave the students a brief background on the Feast of St. Ghevont. The Prelate also spoke to the students about the purpose of the day's seminar, and then called on them to examine their lives and their endeavors, to be prepared in their studies, and to fulfill what is asked of them. Following this brief lecture, the clergy sang songs dedicated to St. Vartan followed by the joint singing of the Lord's Prayer.

At the end of these ceremonies, the Prelate and clergy headed to the temporary offices of the Prelacy to begin the seminar.

The first session of the seminar opened with the Lord's Prayer and welcoming remarks by Arch. Mardirossian. With great joy, the Prelate then announced that responding to his and the Executive Council's request, His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, has bequeathed the title of Archpriest to Rev. Vicken Vassilian, Pastor of St. Garabed church in Hollywood, and offered Rev. Nareg Pehlivanian and Rev. Avedis Torossian, Pastors of Holy Cross Cathedral and St Gregory Church respectively, the privilege of wearing an ornamental *pilon*. The Prelate said that he would personally deliver the encyclical to the pastors when he visits their respective churches.

The election of the Divan took place with Very Rev. Fr. Muron Aznikian being elected to the post of Chairman and Very Rev. Fr. Barthev Gulumian as secretary. Very Rev. Fr. Aznikian thanked his brothers and invited Arch. Tabakian to confer his remarks, after which Very Rev. Fr. Gulumian, the first speaker of the day, spoke on the subject of "The Parish Priest on Performing Sacraments and Rites". The lecture was followed by lunch at 1:30 p.m. after which the Religious Council held their meeting from 2:45 p.m. to 4:45 p.m.

The second session of the seminar began at 5:00 p.m. Professor Hans Faelner of the Vienna University religious studies department participated in this session with a brief presentation about the topic of his thesis, which is "Armenian Holy Mass according to St. Athanasius". The lecture was followed by a question and answer session. The second speaker was Very Rev. Fr. Muron Aznikian whose topic was "The Parish Priest in his Pastoral Duties".

Following the seminar, the Prelate praised the speakers, as well as all clergy members for their participation. Thus he presented all those present with the book "Holy Week" from Antelias. The seminar closed at 6:00 p.m. with the recitation of the "Bahbanich" prayer by the Prelate.

In the evening, at 7:00 p.m., Holy Mass was conducted by Arch. Mardirossian, Prelate, on the occasion of St. Ghevont. Serving at the altar were all the clergy members of the Western Prelacy. In attendance were members of the Prelacy Executive Council, Board of Trustees of the host church, and faithful members of the community. The Prelate offered the sermon in which he spoke of the message of St. Ghevont and the day's seminar.

At the conclusion of Holy Mass, the entire order of clergy and the congregation sang songs dedicated to St. Vartan. Later on, a reception was held in the church hall organized by the Holy Martyrs Ladies Auxiliary.